



Օրն արուեստակից եւ ի մանկութենէ թագաւորին սիրելիներէն մին էր Յովհաննէս Չէլէպի Տիւղեան (ծն. 1749), որ բաւական եղաւ Սուլթան Սէլիմի ժամանակ իւր հօրն յիշատակը կենդանացընելու: Պատմութեանս ընթացքին մէջ տեսնուեցաւ, որ Տիւղեան ընտանեաց թշնամիք անպակաս էին. նոյն երեւոյթն հոս ալ կը կրկնուի, վասն զի այնպիսի փառաւոր պաշտօնի մը փայլը շատերուն աչքը խողտեց շլացուց, եւ ամէն հնարաւոր ջանք ի գործ դնել տուաւ, գոնէ այս անգամ զայն իրենց ձգելու: Սակայն դարձեալ ամէն հնարագիտութիւն եւ յաջողկոտութիւն ի դերեւ ելաւ. վասն զի Սուլթանը գտած էր Յովհաննու վրայ սուր խելք, շրջահայեաց գործունէութիւն, հաւատարիմ ճշդա-